02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

43 (1442) • 15 նոյեմբերի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Ներկայացվեցին մարզային վարչությունների նորանշանակ պետերը

Նոյեմբերի 12-ին ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արման Սարգսյանը ոստիկանության Լոռու մարզային վարչության ու ենթակա բաժինների անձնակազմին ներկայացրեց մարզային վարչության նորանշանակ պետ, ոստիկանության գնդապետ Տիգրան Կարապետյանին:

Տիգրան Կարապետյանը ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությունում զբաղեցրել է պատասխանատու տարբեր պաշտոններ, իսկ մինչ այդ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետի օպերատիվ գծով տեղակալն էր:

Արման Սարգսյանը շնորհակալություն հայտնեց վարչության նախկին պետ Գեւորգ Դակոբյանին՝ մարզում կատարած աշխատանքի համար եւ խոսեց Լոռու մարզում օպերատիվ իրավիճակի մասին:

Ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարը հաձնարարեց ակտիվացնել աշխատանքները կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտման ուղղությամբ: Քննարկվեցին նաեւ տարբեր դեպքերով իրականացվող միջոցառումների մանրամասներ:

Նույն օրը ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արման Սարգսյանը ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ու ենթակա ստորաբաժանումների անձնակազմին ներկայացրեց վարչության նորանշանակ պետ, ոստիկանության գնդապետ Գեւորգ Դակոբյանին:

Գեւորգ Դակոբյանը ոստիկանության համակարգում է շուրջ 24 տարի, զբաղեցրել է տարբեր պաշտոններ՝ օպերլիազորից մինչեւ մարզային վարչության պետ:

Արման Սարգսյանը վերլուծելով Գեղարքունիքի մարզում օպերատիվ իրավիճակը՝ խոսեց կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումների, ապօրինի ծառահատումների եւ ձկնորսության դեմ պայքարի մասին:

Դիմելով քաղաքացիներին ծառայություններ մատուցող ստորաբաժանումների պատասխանատուներին՝ Արման Սարգսյանը կոչ արեց քաղաքացիների հետ շփումներում լինել հարգալից, մատուցել բարձրորակ ծառայություն:

Հանդիպման ընթացքում քննարկման առարկա դարձան նաեւ Գեղարքունիքի մարզային վարչության ենթակա տարածքային ստորաբաժանումների կատարած աշխատանքն ու թերացումները, դրանք վերացնելու համար տրվեցին կոնկրետ ցուցումներ ու հանձնարարականներ:

Մահը ծեծի հետեւանք էր

Հունիսի 4-ին Տաշիր քաղաքում հորեղբորորդու տանը մահացել էր 40-ամյա մի տղամարդ, որն ապրում էր Լոռու մարզի Լեռնահովիտ գյուղում:

Դատաբժշկական փորձաքննությամբ պարզվեց, որ մահը վրա էր հասել ներքին արնահոսության հետեւանքով, իսկ ներքին արնահոսությունը՝ հարվածներից:

Ոստիկանության Տաշիրի բաժնի ծառայողները, ձեռնարկելով օպերատիվ-հետախուզական ծավալուն միջոցառումներ, պարզեցին, որ 40-ամյա տղամարդը մահանալու նախորդ օրը հորեղբորորդու հետ խնջույքի էր մասնակցել: Միջոցառումից հետո նրա եւ Ստեփանավանի 36-ամյա մի բնակչի միջեւ միջադեպ էր եղել: Նախքննությանն այս պահին հայտնի տվյալներով՝ հենց այդ միջադեպի ընթացքում էլ 36-ամյա տղամարդը ձեռքերով եւ ոտքերով խփել էր 40-ամյա տղամարդուն, ինչից հետո նա հորեղբոր որդու հետ գնացել էր նրա տուն, իսկ հաջորդ օրը մահացել էր: Բացատրական աշխատանքի արդյունքում նոյեմբերի 7-ին կասկածյալը ներկայացավ Ստեփանավանի քննչական բաժին:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ու քննչական գործողությունները շարունակվում են: Կատարվում է նախաքննություն:

Հափշտակվել էր 571 միլիոն դրամի գույք

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ ՀՀ կառավարության 2001 թ. փետրվարի 7-ի որոշմամբ Բյուրեղավանի «Հայապակի» ընկերության 573 միլիոն 733 հազար դրամի՝ 80 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասերը ուղղակի վաճառքի պայմանագրով 145 միլիոն դրամով օտարվել են էջմիածնի մի բնակչուհու՝ պարտադիր պայմանով, որ առաջիկա երեք տարիների ընթացքում համապատասխանաբար՝ 100, 80 եւ 70 միլիոն դրամի ներդրումներ կատարի, եւ աշխատանքի համակարգում է շուրջ 24 տարի, զբաղեցրել է տարբեր պաշտոններ՝ օպերլիազորից մինչեւ մարզային վարչության պետ:

Հիշյալ կինը կանխամտածված չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Ընկերությունը կառավարվել է անարդյունավետ, դիտավորյալ չեն կատարվել հարկային մարմինների եւ այլ կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները, ինչի հետեւանքով 2003 թ. դեկտեմբերին ընկերությունը սնանկ է ճանաչվել:

էջ 2

Բացահայտվել է կոռուպցիոն դեպք

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում նախապատրաստված նյութերով բացահայտվել է կոռուպցիոն հերթական դեպքը:

Ըստ քննությամբ ձեռք բերված տվյալների՝ 2005 թ. «Լինս» հիմնադրամի ֆինանսավորմամբ՝ «Երեւաննախագիծ» ՓԲ ընկերության իրականացրած Երեւան քաղաքի Հերացու, Սարալանջի եւ Ավետիսյան փողոցները միացնող նոր մայրուղու շինարարական աշխատանքների նախագծում ներառվել են նաեւ ԱԱՇ ընդունելությունների տան կոյուղատարի վերատեղադրման ընդհանուր՝ 10 միլիոն 702 հազար դրամի աշխատանքները: Դրա վերաբերյալ «Ճանապարհաշինության ՕԻԳ» պետական հիմնարկի հայտարարած մրցույթի հաղթող ճանաչված «Մոստովիկ» ՍՊ ընկերության տնօրինությունը, օգտվելով վերոնշյալ ՕԻԳ-ի իրավասու պաշտոնատար անձանց կողմից ծառայողական պարտականությունները չկատարելու արդյունքում ստեղծված հնարավորությունից, ԱԱՇ ընդունելությունների տան կոյուղատարի վերատեղադրման աշխատանքների փոխարեն ապամոնտաժել եւ խցանել է կոյուղագիծը: «Ճանապարհաշինության ՕԻԳ»-ի իրավասու պաշտոնատար անձանց կողմից էլ 2008 թ. սեպտեմբերի համար կազմված սերտիֆիկատով նախատեսված աշխատանքների ցանկից անհիմն հանվել են հիշյալ աշխատանքները, ինչի հետեւանքով ԱԱՇ ընդունելությունների տունը զրկվել է կոյուղատարի օգտագործման հնարավորությունից:

Հարուցվել է քրեական գործ:

Ավազակային հարձակում դեղատանը

Ոստիկանության Արաբկիրի բաժնի քրեական հետախույզները, ավազակության կասկածանքով, նոյեմբերի 9-ին բերման ենթարկեցին 32-ամյա մի տղամարդու:

Հոկտեմբերի 27-ի գիշերը ոստիկանության Արաբկիրի բաժնում ահազանգ էր ստացվել, որ Ազատության պողոտայի դեղատուն մտած մի տղամարդ, աշխատակցուհուն դանակով սպառնալով, հափշտակել է դրամարկղի գումարը:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվեց ավազակություն կատարած անձի ինքնությունը, եւ նա բերման ենթարկվեց:

Կատարվում է նախաքննություն:

Դանակահարությունը բացահայտվեց

Նոյեմբերի 10-ին հիվանդանոցից ոստիկանության Կոտայքի բաժին ահազանգեցին, որ կտրած-ծակած վնասվածքով ու ներքին արնահոսությամբ հիվանդանոց է տեղափոխվել 35-ամյա մի տղամարդ:

Օպերատիվ խումբը պարզեց, թե ինչ հանգամանքներում է տղամարդը վնասվածքը ստացել: Կոտայքի ոստիկանների բացատրական աշխատանքի արդյունքում դեպքի հաջորդ օրը Աբովյանի բնակիչ, 29-ամյա երիտասարդը կամավոր ներկայացավ բաժին եւ տվեց խոստովանական ցուցում:

Քրեական գործ է հարուցվել: Կատարվում է նախաքննություն:

Վեճ՝ դանակահարությամբ

Փողոցում անհիմն վիճել էին, որի ընթացքում երիտասարդը դանակով մի քանի անգամ խփել էր տղամարդուն:

էջ 2

Սարսափելի է, բայց հետաքրքիր...

Երեխային պետք է բացատրել, որ ֆիլմում տեսածը հորինվածք է, իրականում միշտ չէ, որ այդպես է:

էջ 5

Դարի հիվանդությո՞ւն...

Ըստ վիճակագրության՝ աշխարհում տարեկան մոտ 900 հազար մարդ ինքնասպանություն է գործում:

էջ 6

Օպերատիվ

Ապօրինի ծառահատումներ են բացահայտվել

Ոստիկանության տարածքային ստորաբաժանումները շարունակում են հետեւողական պայքարը ապօրինի ծառահատումները կանխելու եւ բացահայտելու ուղղությամբ՝ իրականացնելով ուժեղացված ծառայություններ:

Նոյեմբերի 9-ին ոստիկանության Տավուշի բաժնի ծառայողները ապօրինի ծառահատման երկու դեպք են բացահայտել: Նրանք ստուգման նպատակով կանգնեցրել են մի իջեւանցու վարած «Զիլ»-ը, որը բարձված էր մոտ 5 խորանարդ մետր փայտնայութով:

Նույն օրը Տավուշի բաժնի ոստիկանները Բերդ-Այգեպար ճանապարհին նկատել են փայտանյութով բարձված տրակտոր: Մոտ 4 խորանարդ մետր փայտանյութով բարձված տրակտորը տեղափոխվել է բաժնի պահպանվող հատուկ տարածք, քանի որ վարորդը բեռի օրինականությունը հավաստող փաստաթուղթ չի ներկայացրել:

Իջեւանի բաժնի ծառայողներն էլ սպասարկման տարածքում շրջայց կատարելիս հայտնաբերել են մոտ 16 խորանարդ մետր փայտանյութ: Իջեւանի մի բնակիչ հայտնել է, որ փայտանյութը պատկանում է իրեն, այն ձեռք է բերել Իջեւանի անտառպետությունից, սակայն համապատասխան փաստաթղթեր չի ներկայացրել:

Ոստիկանության Սպիտակի բաժնի ծառայողներն էլ ճանապարհային ոստիկանների հետ իրականացրած ուժեղացված ծառայության ընթացքում Սպիտակ-Վանաձոր ճանապարհին կանգնեցրել են Շիրակի մարզի բնակիչ, 30-ամյա մի տղամարդու վարած «Ֆորդ»-ը: Վարորդը մոտ երեքուկես խորանարդ մետր փայտանյութի օրինականությունը հավաստող որեւէ փաստաթուղթ չի ներկայացրել: Պարզվել է, որ ծառերը ապօրինի հատվել են Փամբակ գյուղի հարակից անտառից:

Ոստիկանության Կապանի բաժնի ծառայողներն էլ բնապահպանության եւ ընդերքի տեսչության Սյունիքի մասնաճյուղի աշխատակիցների հետ իրականացրած ուժեղացված ծառայության ընթացքում Կապանի Ներքին հանդ բնակավայր տանող ճանապարհին ստուգման են ենթարկել Կապանի մի բնակչի վարած «ԿամԱԶ»-ը, որը բարձված է եղել մոտ 20 խորանարդ մետր փայտանյութով: Վարորդը բեռի օրինականությունը հավաստող փաստաթուղթ չի ներկայացրել, ուստի տրանսպորտային միջոցը տեղափոխվել է բաժնի պահպանվող հատուկ տարածք:

Նոյեմբերի 7-ին ոստիկանության Տարոնի բաժնի ծառայողները, ճանապարհային ոստիկանների հետ, Սպիտակ-Վանաձոր ճանապարհին ստուգել են Վանաձորի 28-ամյա մի բնակչի փայտանյութով բեռնված «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի մեքենան: Վարորդը ներկայացրել է փայտանյութին չհամապատասխանող փաստաթուղթ եւ հայտնել, որ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Գուգարքի անտառտնտեսության Քեղուտ կոչվող տարածքում ծառերն անձամբ է հատել:

Մեքենան, փայտանյութով հանդերձ, տեղափոխվել է ոստիկանության Սպիտակի բաժին:

Դեպքերի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

Հափշտակվել էր 571 միլիոն դրամի գույք

Սկիզբը՝ էջ 1

Սնանկ ճանաչվելուց հետո, առանց որեւէ փաստական հիմնավորման, ընկերության 717 միլիոն 166 հազար դրամ արժողությամբ գույքը գնահատվել է անհամեմատ ցածր՝121 միլիոն 347 հազար դրամ եւ կազմվել է պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող ակնհայտ կեղծ գնահատման հաշվետվություն, ինչից հետո սկսվել է ընկերության գույքի աճուրդային օտարման գործընթաց: Այս գործընթացին զուգահեռ՝ Էջմիածնի բնակչուհին 2003 թվականին իր մտերիմներից մեկի անվամբ հիմնադրել է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն եւ ընկերության ողջ գույքը 1 միլիոն 500 հազար դոլարով վաճառելու վերաբերյալ նախնական պայմանավորվածություն ձեռք բերել մի գործարարի եւ նրա ռուսաստանաբնակ գործընկերների հետ:

Իր մտադրությունն իրականացնելու համար 2004 թ. մայիսին լուծարային կառավարչի կողմից կազմակերպված ձեւական աճուրդով սնանկ ճանաչված ընկերության ամբողջ գույքը 121 միլիոն 347 հազար դրամով ձեռք է բերել աճուրդի միակ մասնակից այն ընկերությունը, որը Էջմիածնի բնակչուհին իր մտերիմներից մեկի անվամբ նախապես հիմնադրել էր:

Գործարքից տասնինը օր անց սնանկ ճանաչված ընկերության գույքը ձեւական աճուրդով ձեռք բերած ընկերությունը իրավահաջորդության եղանակով ընդգրկվել է մեկ այլ ընկերության կանոնադրական կապիտալում: Այս մեքենայությունների հետեւանքով Էջմիածնի բնակչուհին 717 միլիոն 166 հազար դրամ արժողությամբ գույքի համար վճարելով ընդամենը 266 միլիոն 347 հազար դրամ, լուծարային կառավարչի օժանդակությամբ, խաբեությամբ հափշտակել է «Հայապակի» ընկերության 80 տոկոս պետությանն ու 20 տոկոս բաժնետերերին պատկանող առանձնապես խոշոր չափերով՝ 571 միլիոն 166 հազար դրամ արժողությամբ գույքը:

Քրեական գործ է հարուցվել: Կատարվում է նախաքննություն:

Մ. Ս.

Նախկին ղեկավարի ապօրինությունները

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում ստացված տեղեկությունների հիման վրա նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ Դավիթաշեն վարչական շրջանի նախկին ղեկավարը, որը պաշտոնավարել է 2012-2018 թվականներին, միաժամանակ հանդիսանալով «Դավիթաշեն» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ եւ փաստացի կառավարելով ու տնօրինելով հիմնադրամի ֆինանսական միջոցները՝ նախնական համաձայնության է եկել վարչական շրջանի աշխատակազմի նախկին ղեկավարի ու հիշյալ բարեգործական հիմնադրամի տնօրենի հետ եւ ապօրինություններ թույլ տվել:

Ըստ քննությանն այս պահին հայտնի տվյալների՝ վարչական շրջանի նախկին ղեկավարի բանավոր հրահանգների հիման վրա համայնքապետարանի տարբեր աշխատակիցներին ու վարչական շրջանի բնակիչներին ֆինանսական օգնություն տրամադրելու վերաբերյալ կազմվել ու ստորագրվել են կեղծ փաստաթղթեր, որոնց հիման վրա 2012-2014 թվականներին հափշտակվել է ավելի քան 9 միլիոն դրամ:

Դեպքի առթիվ ոստիկանությունում քրեական գործ է հարուցվել եւ ուղարկվել քննչական կոմիտե:

Չարաշահումներ Բյուրականում

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչությունում ստացված տեղեկությունների հիման վրա նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ Բյուրական համայնքի ավագանու՝ 2014 թ. հունվարին կայացրած որոշման համաձայն՝ համայնքի օրվա կարգավորիչ ջրամբարից իրավաբանական եւ ջրավազաններ ունեցող ֆիզիկական անձանց խմելու ջրի սպասարկման ծառայություն իրականացնելու համար սահմանվել է մեկ խմ ջրի դիմաց 150 դրամ տեղական վճար: Սակայն համայնքի ղեկավարը, պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, Բյուրական համայնքի, ինչպես եւ համայնքի տարածքից դուրս գործող կազմակերպությունների հետ ջրի սպառման վերաբերյալ բանավոր պայմանավորվածություն է ձեռք բերել:

Ըստ քննությանն այս պահին հայտնի տվյալների՝ 2014-2019 թթ. ընթացքում այդ կազմակերպությունները սպառել են 24 հազար խորանարդ մետրից ավելի ջուր, որի դիմաց Բյուրական համայնքի բյուջե չի փոխանցվել 3 միլիոն 600 հազար դրամից ավելի գումար, ինչի հետեւանքով համայնքին պատճառվել է էական վնաս:

Քրեական գործ է հարուցվել:

Գրպանահատը բերման ենթարկվեց

Հոկտեմբերի 31-ին ոստիկանության Կենտրոնական բաժնում օպերատիվ կառավարման կենտրոնից հաղորդում էր ստացվել, որ մոտ մեկ ժամ առաջ մի կին Տերյան-Մոսկովյան փողոցների խաչմերուկում նկատել է, որ պայուսակից գողացել են դրամապանակը, որի մեջ եղել է փող, նույնականացման ու բանկային քարտեր:

Հաղորդումը ստանալուն պես ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողները համապատասխան միջոցառումներ ձեռնարկեցին: Նրանց միացան նաեւ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի 6-րդ բաժանմունքի ծառայողները, եւ համատեղ աշխատանքի շնորհիվ հաջորդ օրը գրպանահատը հայտնաբերվեց:

Նոյեմբերի 1-ին քրեական հետախույզները Աբովյան փողոցից, գողություն կատարելու կասկածանքով, ոստիկանության Կենտրոնական բաժին բերման ենթարկեցին Դրոյի փողոցի 43-ամյա մի բնակչի:

Գողոնը հայտնաբերվել է:

Նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Վեհ՝ դանակահարությամբ

Նոյեմբերի 11-ին «Էրեբունի» բժշկական կենտրոնից ոստիկանության Շենգավիթի բաժին հաղորդում ստացվեց, որ կրծքավանդակի ու պարանոցի կտրած-ծակած վերքերով Բագրատունյաց փողոցից հիվանդանոց է տեղափոխվել Երեւանի բնակիչ, 51-ամյա մի տղամարդ: Նա ի վիճակի չէր բացատրություն տալու: Շենգավիթի քրեական հետախույզներն ու անչափահասների գործերով ծառայողները, սակայն, թարմ հետքերով պարզեցին կատարվածի հանգամանքները:

Նախնական տվյալներով՝ հիվանդանոց տեղափոխված տղամարդը եւ մի երիտասարդ փողոցում անհիմն վիճել էին, որի ընթացքում երիտասարդը դանակով մի քանի անգամ խփել էր տղամարդուն: 17-ամյա կասկածվողի հետ տարված բացատրական աշխատանքի շնորհիվ նա դեպքից մի քանի ժամ անց ներկայացավ ոստիկանության Շենգավիթի բաժին, ներկայացրեց հանցագործության գործիք դանակն ու տվեց խոստովանական բացատրություն:

Կատարվում է քննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Բացահայտում են Նաիրիի ոստիկանները

Հոկտեմբերի 30-ին ոստիկանության Նաիրիի բաժնում գողության վերաբերյալ հաղորդում էր ստացվել: Անհայտ անձը կամ անձինք Եղվարդ քաղաքում գողացել էին մի երիտասարդի պատկանող վարելահողով անցնող մի քանի հարյուր մետրանոց խողովակաշարը:

Նախնական հաշվարկով տուժողին պատճառվել էր 2 միլիոն դրամից ավելի վնաս:

Ոստիկանության Նաիրիի բաժնի քրեական հետախույզները, օրեր տեւած օպերատիվ միջոցառումների արդյունքում, պարզեցին գողությունը կատարած անձանց ինքնությունը: Բացատրական աշխատանքի շնորհիվ նրանք ներկայացան ոստիկանություն:

Հետագա միջոցառումներով պարզվեց, որ գողոնը մի քանի հարյուր հազար դրամով վաճառել էին:

Կատարվում է քննություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Բոլորիս հոգածության առարկան

2019 թվականի 9 ամիսներին աճել են ապօրինի անտառահատման դեպքերով հարուցված գործերը: Ներկայացվող վիճակագրությունը վերաբերում է միայն Տավուշի մարզին:

2019 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Տավուշի մարզում ապօրինի անտառահատման 107 քրեական գործ է հարուցվել, որոնցից 22-ն արդեն ուղարկվել է դատարան: Դատաքննության ուղարկված գործերով, որպես մեղադրյալ, 23 անձ է անցնում: Տասնութ քրեական գործեր հարուցվել են ապօրինի ծառահատումների եւ պաշտոնեական հանցագործությունների հատկանիշներով: Այդ քրեական գործերով «Դայանտառ» ՊՈԱԿ-ի եւ «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ինը պաշտոնատար անձանց մեղադրանք է առաջադրվել պաշտոնեական անփութություն թույլ տալու համար:

Ապօրինի ծառահատման շատ դեպքեր հաճախ կատարվում են հենց անտառն ի պաշտոնե պաշտպանելու կոչվածների գիտությամբ, նրանց համաձայնությամբ: Այդ վայ պահապաններից մի քանիսի գործերով այսօր նյութեր են նախապատրաստվում ոստիկանությունում, մի քանիսն արդեն պատիժ են կրել: Նրանցից մեկի ցուցումով, օրինակ, տասնյակ բոխի ծառեր էին փայտանյութի վերածվել: Դրանցով բարձված «ԿամԱԶ»-ը հայտնաբերեցին ոստիկանության աշխատակիցները:

Ով, եթե ոչ անտառը պահպանելուն կոչվածները քաջատեղյակ են, որ ոստիկանությունը խստորեն պայքարում է ապօրինի անտառահատումների դեմ՝ մշտապես իրականացնելով կանխարգելիչ միջոցառումներ:

Անտառը, որքան էլ թվա անպաշտպան, որքան էլ անօրենների հովանավորաջակցողները ներսից լինեն՝ պաշտպանված է. վերջին շրջանում, մասնավորապես՝ ոստիկանության շարունակական ու խիստ պայքարը, որդեգրած մարտավարությունը դա են ապացուցում:

Ձմեռը մոտենում է, մեծանում է հատկապես փայտի բիզնեսով զբաղվողների թեթեւ ձեռքով կանգուն ծառերի՝ վառելափայտի վերածվելու վտանգը: Ի հակադարձումն՝ անտառի պաշտպաններն առավել աչալուրջ, առավել հետեւողական են իրականացնում անտառի նկատմամբ ապօրինի գործողությունների դեմ պայքարը:

Բերենք մի քանի օրինակ:

Ոստիկանության Դիլիջանի բաժնում նախապատրաստված նյութերով պարզվել է, որ «Դիլիջանի ազգային պարկի» տեղամասերից մեկում տասից ավելի հաճարենի եւ կաղնի ապօրինի հատողը Անտառամեջ գյուղի բնակիչ է: Նրա գործողությունների հետեւանքով պետությանը կես միլիոն դրամից ավելի վնաս էր պատճառվել:

Ազգային պարկի նույն տեղամասի վրա հաջորդ հարձակվողը Սեւան քաղաքի բնակիչ է: Նա տասնվեց կանգուն ծառ է հատել՝ պետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափի վնաս:

Ոստիկանության Դիլիջանի բաժնում նախապատրաստվող նյութերը «Հաղարծին» տեղամասի տարածքից կատարված ապօրինի հատումների վերաբերյալ են. հաճարենու եւ բոխու կանգուն ծառերը հատողը փայտանյութը հասցրել էր վաճառել վանաձորցի պատվիրատուին:

Դիլիջանի քննչական բաժանմունքում նյութեր են նախապատրաստվում «Դիլիջանի ազգային պարկի» «Շամախյան» տեղամասից կատարված ապօրինի անտառահատումների փաստերով: Այս անգամ ապօրինի գործողությունների հետեւանքով պետությանը պատճառված վնասն անցնում է երկու միլիոն դրամի սահմանը:

Նոյեմբերի 4-ին ոստիկանության Իջեւանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները, իրացնելով ստացված օպերատիվ տվյալները, այցելել են Սեւքար գյուղի վարչական տարածքի փայտածուխի արտադրամաս, որտեղ հայտնաբերել են մոտ 8 խորանարդ մետր փայտանյութ, ինչպես եւ 6 հատ փայտածուխ պատրաստելու տարա, որոնց մեջ մոտ 50 պարկ փայտածուխ էր: Արտադրամասի տերը, որը Սեւքար գյուղի 69-ամյա բնակիչ է, հայտնաբերվածի օրինականությունը հավաստող որեւէ փաստաթուղթ չի ներկայացրել: Փայտածուխի արտադրամասի գործունեությունը կասեցվել է: Նախապատրաստվում են նյութեր:

Ապօրինի անտառահատումների դեմ պայքարը շարունակական է, բնապահպանական հանցագործություններով պետության օրինական շահերին պատճառված վնասը վերականգնելու ուղղությամբ միջոցառումները՝ նույնպես: Միայն Տավուշի մարզի կտրվածքով՝ 2019 թ. հունվարի 1-ից հոկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում դատարան ուղարկված քրեական գործերով՝ բնությանը պատճառված 17 միլիոն դրամի վնասից արդեն վերականգնվել է 6 միլիոն 700 հազար դրամը:

Անտառը պետության հոգածությունից դուրս չէ. անտառի նկատմամբ ապօրինի գործողությունների դեմ պայքարը մշտական է: Բայց, ցավոք, անտառը շարունակում է նոսրանալ, որովհետեւ մարդու միտքը սեփական բարեկեցությունից այն կողմ չի հասնում, որովհետեւ մարդը երբեմն սեփական շահը գերադասում է ընդհանուրին հասցվող ահռելի վնասին: Մինչդեռ անտառը՝ բոլորիս հարստությունը, բոլորիս հոգածության առարկան պիտի լինի:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Ձոնական խմբում ու բանկում

Հոկտեմբերի 3-ին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնում գողության վերաբերյալ ահազանգ ստացվեց: Խանութում հափշտակել էին մի կնոջ դրամապանակը, որի մեջ անձնագիր, փող, բանկային եւ զեղչի քարտեր էին: Օրեր անց բաժնում հնչեց եւս մեկ ահազանգ. հանգուստի խանութում դրամապանակ էին հափշտակել, որի մեջ բանկային քարտ ու 60 հազար դրամ էր:

Քանաքեռ-Զեյթունի քրեական հետախույզների եւ համայնքային ոստիկանների համատեղ միջոցառումների շնորհիվ պարզ դարձավ, որ երկու դեպքում էլ գողությունը կատարել է նույն անձը, որի ինքնությունը շուտով պարզվեց: Երեւանի բնակիչ, 42-ամյա տղամարդը հայտնաբերվեց նոյեմբերի 4-ին, մայրաքաղաքի Ազատության պողոտայում ու կասկածանքով բերման ենթարկվեց բաժին, որտեղ էլ տվեց խոստովանական բացատրություն:

Ըստ քննությանն այս պահին հայտնի տվյալների՝ բերման ենթարկվածը անձնական ունեցվածքի գողություններ է արել նաեւ մայրաքաղաքի այլ վարչական շրջաններում: Ձեռնարկվում են միջոցառումներ նաեւ այդ դեպքերի հանգամանքները պարզելու եւ տուժած անձանց հայտնաբերելու ուղղությամբ:

Քննությունը շարունակվում է:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Բացահայտվել է Ճենգավիթի դանակահարությունը

Հոկտեմբերի 27-ին բժշկական կենտրոնից ոստիկանության Ճենգավիթի բաժնում հաղորդում էր ստացվել, որ որովայնի կտրած-ծակած վերքով իրենց մոտ է տեղափոխվել Չեխովի փողոցի մի բնակիչ: Նրան դանակահարել էին:

Բաժնի ծառայողները բացահայտման ուղղությամբ տարաբնույթ միջոցառումներ ձեռնարկեցին՝ հիվանդանոցում համապատասխան արձանագրություններ կազմելուց մինչեւ օպերատիվ հարցումներ:

Բացահայտման աշխատանքներին միացան ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր եւ Երեւան քաղաքի վարչությունների քրեական հետախույզները:

Համատեղ աշխատանքի շնորհիվ ոստիկանները տեղեկություններ ստացան, որ նշված հանցագործությունը հնարավոր է կատարած լինի Մանթաշյան փողոցի 34-ամյա մի բնակիչ:

Բացատրական աշխատանքի շնորհիվ հոկտեմբերի 30-ին կասկածվողը ներկայացել է ոստիկանության Ճենգավիթի բաժին, ներկայացրել դանակը եւ խոստովանել է, որ հոկտեմբերի 27-ին վիճաբանության ժամանակ ինքն է դանակահարել է տուժողին:

Հանգամանքները պարզվում են:

Քննությունը շարունակվում է:

Ապօրինի թմրաշրջանառություն

Ոստիկանությունը շարունակում է թմրանյութերի օգտագործման եւ անօրինական շրջանառության դեմ հետեւողական պայքարը: Հերթական դեպքը բացահայտեցին Թալինի ոստիկանները:

Հոկտեմբերի 23-ին, ժամը 3.30-ի սահմաններում, ոստիկանության Թալինի բաժնի քրեական հետախույզները, ապօրինի թմրամիջոց պահելու կասկածանքով, Թալին-Ակունք ճանապարհից, իր վարած «Օպել» մակնիշի մեքենայով, բաժին բերման ենթարկեցին Ռուսաստանի Դաշնության 53-ամյա քաղաքացու:

Մեքենան զննելիս նա բեռնախցիկից ներկայացրեց 46 հատ «Տրիֆտազին», 27 հատ «Լեւոմեպրոմազի» եւ 19 հատ «Ազալեպսին» գրառումներով հոգեմետ հաբեր:

Հոկտեմբերի 23-ին ոստիկանության Մուշի բաժնի քրեական հետախույզները Գյումրիի Օզանյան փողոցից, ապօրինի թմրամիջոց պահելու եւ օգտագործելու կասկածանքով, բերման ենթարկեցին Հանիսօղլյան փողոցի 54-ամյա մի բնակչի:

Անձնական խուզարկությամբ ոստիկանները նրա գրպանից տեմպալգին, ասպիրին եւ պարացետամոլ դեղահաբերից բացի, հայտնաբերեցին նաեւ պոլիէթիլենային տոպրակով տարբեր չափերի, 5 կտոր սպիտակ դեղահաբ եւ փոշենման զանգված:

Ըստ բերման ենթարկվածի՝ պոլիէթիլենային տոպրակում հայտնաբերվածը մեթադոն է, պահում է իր օգտագործման համար:

Հանգամանքները պարզվում են:

Փաստերի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Կոտրել էր գրախանութի ապակիները

Նոյեմբերի 5-ին ոստիկանության Ճենգավիթի բաժին ահազանգ ստացվեց, որ մի հարբած տղամարդ կոտրում է Արարատյան փողոցի գրախանութի պատուհանների ապակիները:

Ահազանգին արձագանքած օպերատիվ խումբը դեպքի վայրից, խուլիգանություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկեց Արտաշիսյան փողոցի բնակիչ, 47-ամյա մի տղամարդու: Պարզվեց, որ նա մոտ 15 րոպե, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով հասարակության նկատմամբ, հայհոյել էր գրախանութի վաճառողուհուն եւ կոտրել ցուցափեղկերն ու դռան ապակիները:

Դեպքի առթիվ խուլիգանության հատկանիշներով քրեական գործ հարուցվեց, բերման ենթարկված տղամարդն էլ ձերբակալվեց:

Ի դեպ, նա սեպտեմբերի 28-ին դարձյալ բերման էր ենթարկվել ոստիկանության Ճենգավիթի բաժին, քանի որ դիտավորությամբ հարվածել էր հարեւանուհու մեքենայի անվաթեւին՝ պատճառելով նյութական վնաս: Այս դեպքում եւս քրեական գործ էր հարուցվել, սակայն տղամարդը ստորագրությամբ բաց էր թողնվել:

Նախաքննությունը շարունակվում է:

Արա ՄՈՎՍԻՍՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

«Շրջայց» խանութներով

Ոստիկանության Բազումի բաժնի աշխատակիցները, գողություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկեցին Լոռու մարզի Յաղդան գյուղի բնակիչ Մուշեղ Մկրտչյանին: Նյութերի նախապատրաստման ընթացքում նա խոստովանական բացատրություն տվեց:

Փողի կարիք ուներ, ինչը կարող էր կարգավորել օրավարձով աշխատանք կատարելով կամ բարեկամներից պարտք վերցնելով: Ոչ մեկը, ոչ մյուսը Մուշեղի սրտով չէր, փոխարենը՝ որոշեց Վանաձոր քաղաքի փողոցների դիտահորի կափարիչները գողանալ ու վաճառել: Փողոցներից մեկի դիտահորը զրկեց կափարիչից: Գողոնը հանձնեց մետաղի ընդունման կետ՝ վաստակելով 6 հազար դրամ:

Օրեր անց նորից գործի անցավ: Այս դեպքում եւս գողոնը վաճառեց 6 հազարով:

Դիտահորեր ինչքան ասես կային: Այսինքն՝ եկամուտի հանցավոր աղբյուրն անսպառ էր: Որոշ ժամանակ անց մի դիտահորից եւս 6 հազար դրամ վաստակեց:

Մուշեղը ուրախ էր, մինչեւ այն պահը, երբ բերման ենթարկվեց:

Նրա արարքում առկա էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցարարք: Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

Գողություն կատարելու կասկածանքով ոստիկանության Բազումի բաժին բերման ենթարկվեց նաեւ վանաձորաբնակ Հովհաննես Խաչատրյանը: Նա եւս խոստովանական բացատրություն տվեց: Եվ այսպես, դեռեւս հունիսին Հովհաննեսը հագուստի խանութի մոտով անցնելիս ոտքը կախ էր գցել, ներս մտել ու զննել ջինսե տաբատները: Վաճառողուհու զբաղված լինելը չէր վրիպել Հովհաննեսի աչքից եւ օգտվել էր ընձեռված հնարավորությունից: Մի խոսքով՝ խանութից հեռացել էր ջինսե տաբատով հանդերձ: Ավարից գոհ էր, քանզի այն շուկայում վաճառել էր 6 հազար դրամով: Հաջողությունից ոգեւորված՝ օրեր անց կրկին մտել էր հագուստի նույն խանութը: Դարմար պահը որսալով՝ գողացել էր ջինսե մանկական տաբատ: Այս դեպքում գողոնի վաճառքը իրականացրել էր ավտոկայանում: «Եկամուտը» դարձյալ 6 հազար դրամ էր:

Հովհաննես Խաչատրյանը կատարել էր արարք՝ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 1-ին մասով: Այս դեպքում եւս դիմողը բողոքը չի պնդել, եւ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Համակարգչի օգուտն ու վնասը

Վերնագիրն արդեն հուշում է, թե ինչի մասին է խոսքը: Ցանկացած ընտանիքում միշտ էլ կոնֆլիկտներ լինում են երեխաների եւ ծնողների, ամուսինների միջեւ: Ցավոք, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները՝ տանը համակարգիչ հայտնվելուց հետո սկսվում են նոր վիճաբանություններ, որոնք ուղղակի կապված են համակարգչի հետ: Բայց մինչ վեճերի պատճառները վերլուծելը, պարզենք թե համակարգիչը ինչ վնաս է հասցնում մեր առողջությանը: Դիմա կխոսենք մի երեւույթի մասին, որը ընթերցողին գուցե մի փոքր տարօրինակ թվա, սակայն ոլորտի շատ մասնագետներ միաբերան հաստատում են կարեւորությունը:

Գրեթե բոլորիս ծանոթ է հողանցումը: Շատերը հարց կտան՝ ի՞նչ կապ ունի այն համակարգչի հետ: Ամենաուղի՛ղ: Եթե ցանկանում եք, որ ձեր տան համակարգիչն իրենից վտանգ չներկայացնի, հարկավոր է հողանցում կատարել: Զարմանալ պետք չէ: Եթե կա հնարավորություն՝ կատարեք հողանցում: Դրանով ոչ միայն ապահովում եք ձեզ, այլեւ ձեր տեխնիկան: Կան մարդիկ, որ հասկանում են՝ դա տեխնիկայի շահագործման ճիշտ եղանակն է, բայց իրենց նեղություն չեն տալիս կիրառել: Սա անվտանգության առաջնային խնդիրներից է:

Համակարգչի առաջ նստած մարդու համար ամենախոցելին աչքերն են: Ցավոք, մինչեւ հիմա հավատացնում են, որ բյուրեղահեղուկային մոնիթորներն ընդհանրապես անվնաս են: Մասնագետները վստահեցնում են, որ դա միֆ է: Իհարկե, եթե այդ մոնիթորները համեմատենք էլեկտրալուսայինի հետ, վերջինները ունեն ավելի բացասական ազդեցություն:

Հարկավոր է հասկանալ, որ աչքի կառուցվածքը եւ մարդու օրգանիզմը նախատեսված չեն բազմաժամյա լարված աշխատանքի համար, ինչը բերում է աչքի եւ ողնաշարի մկանների թուլացման: Եվ տեխնիկական ոչ մի նորարարություն չի կարող պաշտպանել մարդու օրգանիզմը բազմաթիվ խնդիրներից, որն ունենում է մարդը համակարգչի առաջ ժամերով աշխատելով: Եթե անգամ ունես ամենաժամանակակից նոթբուք, ապա հոսանքին միացված լարը արդեն իսկ էլեկտրամագնիսական դաշտ է՝ չխոսելով այնպիսի նեգատիվ երեւույթի մասին, ինչպիսին է ծռված ողնաշարը: Դրա համար էլ մասնագետները խորհուրդ են տալիս կուրորեն չհավատալ այն ամենին, ինչ գովազդում են տեխնիկա արտադրողներն ու վաճառողները: Ցուրաքանչյուր նոր տեղեկատվության հարկավոր է վերապահումով մոտենալ եւ գրագետ ու կշռադատված վերլուծել ամեն ինչ: Փորձենք թվարկել այն կարելիների եւ չի կարելիների շարքը, բոլոր անհրաժեշտ եւ կարեւոր կանոնները, որոնց կիրառումը եւ իմացությունը անհրաժեշտ է համակարգչով աշխատողին:

- Հարկավոր է հիշել, որ հղի կնոջը կամ կրծքով կերակրող մորը խստիվ արգելվում է համակարգչի առաջ նստել: Սիրելի մայրիկնե՛ր, հանուն ձեր փոքրիկների միառժամանակ մոռացեք համակարգչի գոյության մասին:

- Համակարգչի առաջ երկու ժամից ավելի նստելու դեպքում աշխատանքը ընդմիջեք, քայլեք, վարժություններ կատարեք:

- Օրվա ընթացքում անընդհատ փոխեք աշխատանքի ձեւը:

- Կես ժամից ավելի գլուխ չկախեք ստեղնաշարի վրա. հետագայում կկանգնեք առողջական լուրջ խնդիրների առաջ:

- Ամենափոքր առիթն իսկ օգտագործեք աթոռից եւ համակարգչից կտրվելու համար:

- Եթե նախօրոք գիտեք, որ երկար եք նստելու համակարգչի առաջ, նախ լավ հանգստացեք, ընտրեք նստելու ճիշտ ձեւ, հակառակ դեպքում ձեր ողնաշարը «կըմբոստանա»:

- Եթե հնարավորություն ունեք՝ ինքներդ կարգավորեք ձեր աշխատանքային գրաֆիկը՝ երբ եւ որքան աշխատել համակարգչով:

- Պաշտպանեք աչքերն ու ողնաշարը:

Ծնողների եւ զավակների միջեւ միշտ էլ կոնֆլիկտ լինում է: Մենք կփորձենք այդ խնդիրը դիտարկել մեկ այլ տեսանկյունից: Այսօր շատ ընտանիքներում երեխային հրամայելը, որ դադարեցնի համակարգչի առաջ նստելը, սովորական երեւույթ է, ինչպես, ասենք՝ երեխայի հետ «աճուրդի» մեջ մտնելը, երբ համակարգչով խաղալը դիտարկվում է որպես պարգեւատրում ժամանակին կատարված տնային աշխատանքի համար:

Ցանկացած ծնող վստահ է, որ նման կոնֆլիկտների պատճառն առաջին հերթին երեխաների առողջությունն է: Բայց ինչպես ցույց է տալիս դիտարկումը՝ այդպիսի հոգատարությունը աննկատ վերածվում է պարտադրողական կամ այլ ֆունկցիայի: Այդպիսի իրավիճակն ունի նաեւ վտանգավոր երկակիություն:

Շարունակելի

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Զվարճալի ամփոփագիր

Խարդախ որդին

55-ամյա մի կին ոստիկանությունում հաղորդում է տվել, որ որդին զանգելու նպատակով խնդրել է իր բջջային հեռախոսը, սակայն չի վերադարձրել եւ խաբեությամբ տիրացել է դրան:

Խարդախության այսպիսի դեպքերն ամփոփագրերում քիչ չեն: Բայց հարազատ մո՞ր նկատմամբ...

Ձեռքից ձեռք անցած «Ինֆինիտի»-ն

Դեռեւս ամիսներ առաջ 28-ամյա մի երիտասարդ իր «Ինֆինիտի» մեքենան վաճառելու վերաբերյալ կայքում հայտարարություն է տեղադրել, որից հետո իրեն զանգել է մեկը եւ համաձայնության եկել գնի շուրջ՝ մոտ յոթ հազար դոլար:

Նույն օրը գնորդը վճարել է նախնական 2.500 դոլար, վերցրել մեքենան եւ պարտավորվել մնացածը տալ մինչեւ սեպտեմբեր, սակայն մինչ օրս չի վճարել:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ պարզվել է գնորդի ինքնությունը: Պարզվել է նաեւ, որ 24-ամյա երիտասարդը նույն մեքենան օգոստոսին հինգ հազար դոլարով վաճառել է մեկ այլ անձի եւ լքել հայրենիքը:

Շերշե լա Փամ (փնտրեք կնոջ)

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ «տրավմատիկ կոնդյուկտիրիտ» ախտորոշմամբ իրենց մոտ են տեղափոխվել 11 եւ 13 տարեկան տղաներ: Նրանք հայտնել են, թե անհայտ անձն է ինչ-որ հեղուկ փչել իրենց դեմքին:

Մեկնած ոստիկանները պարզել են, որ տղաները մրգով ու լոլիկով խփել են 31-ամյա մի կնոջ բնակարանի դռանն ու պատուհաններին, կինն էլ ինքնապաշտպանական լիցքավորիչից դեռեւս չպարզված նյութ է սրսկել նրանց դեմքին:

Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

Շերշե լա...

Ոստիկանություն է զանգել 41-ամյա մի կին եւ հայտնել, թե իրենց գյուղում Նատալյան խփել է իրեն եւ գողացել հեռախոսը:

Մեկնած ոստիկանները պարզել են, որ իսկապես Նատալյան վիճաբանության ընթացքում մի քանի անգամ բռունցքով խփել է նրա գլխին: Ինչ վերաբերում է գողությանը՝ պարզվել է, որ Նատալյան գետնից վերցրել է կնոջ բջջային հեռախոսը եւ նետել գետը:

Երկրորդ կինը՝ մտքում

Ոստիկանություն զանգած 35-ամյա մի կին հայտնում էր, թե երեկոյան իր ամուսնու երկրորդ կինը մեկ այլ տղամարդու հետ իրեն փայտով ծեծել են՝ պատճառելով վնասվածք:

Մեկնած ոստիկաններին կինն ավելի որոշակի հաղորդում է տվել. տան բակում նախկին ամուսնու ընկերը ձեռքերով խփել է իրեն:

Երկրորդ կնոջ եւ փայտի մասին այլեւս ոչ մի խոսք:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ նոյեմբերի 7-ից 14-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 38 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր ծեծի, սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողությունների հարկադրելու եւ շորթման, 1-ը՝ մարդուն առեւանգելու, 1-ը՝ տասնվեց տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերության կամ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու, 4-ը՝ գողության, 5-ը՝ խարդախության, 1-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելու, պահելու կամ իրացնելու, 1-ը՝ հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելուն հանցակցելու, 1-ը՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու կամ այդ անձի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու կամ սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելու կամ խուսափելու, 1-ը՝ խուլիգանության, 1-ը՝ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ կաշառք տալու, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելուն, իրացնելուն կամ օգտագործելուն հանցակցելու եւ պետական սահմանն ապօրինի հատելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 5 հետախուզվող:

Արձանագրվել է 96 ճանապարհատրանսպորտային պատահար. 4 մարդ զոհվել է, 132-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 27 դեպք. 3 մարդ զոհվել է, 24-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Նոյեմբերի 10-ին Երեւանի Սեբաստիայի փողոցում իրար են բախվել «ԲՄՎ», «ՎԱԶ-2114» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ. «Մերսեդես»-ի հինգ ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Նոյեմբերի 11-ին Երեւանի Ծարավ Աղբյուրի փողոցում «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 22-ամյա երիտասարդի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 11-ին Երեւան-Գյումրի ճանապարհի 62-րդ կմ-ին «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենան վթարի է ենթարկվել. 57-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 11-ին Արմավիրի մարզի Սարդարապատ գյուղում «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 9-ամյա տղայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 11-ին Երեւան-Արմավիր ճանապարհի 19-րդ կմ-ին «Մազդա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 63-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 11-ին Իջեւան քաղաքի Արցախյան փողոցում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 41-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 12-ին Էջմիածին քաղաքի Մաշտոցի փողոցում «ԿամԱԶ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել անձը չպարզված հեծանվորդի, որը տեղում մահացել է:

■

Նոյեմբերի 12-ին Երեւանի Լենինգրադյան փողոցում «Պորշ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 25-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 12-ին Երեւանի Տիտոգրադյան փողոցում «ԳԱԶ-322132» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 17-ամյա քաղաքացու, որը եւ նշված ավտոմեքենայի 67-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Նոյեմբերի 12-ին Երեւանի Ռաֆֆու փողոցում «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 6-ամյա տղայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 12-ին Երեւանի Բաբայան փողոցում իրար են բախվել «Մազդա» եւ «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենաներ. «Տոյոտա»-ի 32-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 12-ին Արմավիր քաղաքի Աբովյան-Բաղրամյան փողոցների խաչմերուկում «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 70-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 12-ին Չարենցավան քաղաքի Խանջյան փողոցում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան բախվել է մեկ այլ «Մերսեդես»-ի. մեքենաներից մեկի 20-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Նոյեմբերի 12-ին Գորիս քաղաքի Սյունիքի փողոցում «ՎԱԶ-21213» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 61-ամյա քաղաքացու, այնուհետեւ մեքենան բախվել է էլեկտրասյանը. վրաերթի ենթարկված 61-ամյա քաղաքացին եւ 78-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Նոյեմբերի 12-ին Ստեփանակերտ-Գորիս ճանապարհի 94-րդ կմ-ին «ԿամԱԶ» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ հայտնվել դաշտում. 44-ամյա վարորդը եւ 33-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Սարսափելի է, բայց հետաքրքիր...

Ինչո՞ւ են մեր փոքրիկներին հետաքրքրում սարսափելի, դաժան ֆիլմերն ու մուլտֆիլմերը: Բացատրությունը կարծես թե մեկն է. այն նույն պատճառով, ինչով հետաքրքրում են մեծերին: Հետաքրքիր է, գերող, վառ եւ կարծես թե «խաղում» է նյարդերի հետ:

Երեխային դուր է գալիս, որ ապահով նստած բազմոցին՝ հետեւում է «վախենալու» տեսարանների: Ինքը ապահովագրված է, իսկ ահա այնտեղ ինչ-որ մեկը պայքար է մղում, եւ այդ ինչ-որ մեկի պայքարը շատ հետաքրքիր է նրան: Բացի այդ, հաճելի է գիտակցել, որ իրական կյանքում ամեն ինչ լավ է...

Նման ֆիլմերի դիտումը ոչ միայն «խաղում» է նյարդերի հետ, երեխան հերոսների լավատեսությամբ է լցվում. տեսնում եք, թե ինչ անելանելի վիճակ էր, բայց գերհերոսը հաղթեց: Այդ դեպքում փոքրիկը ոչ միայն ուրախանում է սիրելի հերոսի համար, այլեւ իրեն է զգում հաղթանակող: Չէ՞ որ նա էլ դիտման ընթացքում մասնակցում էր գործողություններին եւ շատ էր ցանկանում, որ չարը պատժվի: Երեխաների համար դժվար է տարբերակել իրականությունը հորինվածքից, եւ ինչքան երեխան փոքր է, տարբերակումն ավելի դժվար է:

Ուլորտի մասնագետները խորհուրդ են տալիս թույլ զգալ նման ֆիլմերի դիտումը, բայց եթե երեխան կարողացել է ձեզ համոզել, մի մեղադրեք ձեզ անսկզբունքայնության համար, այլ դիտման ընթացքում հետեւեք, թե ինչ է կատարվում ձեր երեխայի հետ: Համարեք, որ թեստ եք անցկացնում եւ դրա հիման վրա կազմակերպեք երեխայի առօրյան, ազատ ժամանակը:

Դիտումից հետո որոշ ժամանակ երեխան դեռ ֆիլմի ազդեցության տակ է եւ տարված՝ վերարտադրում է իրեն դուր եկած տեսարանները: Բայց դա երկար չի ձգվում. մինչ երեք տարեկան երեխաների համար՝ երեսուն րոպե, նախադպրոցականների եւ դպրոցականների դեպքում՝ մեկից երկու ժամ: Նշված ժամանակամիջոցի ավարտին երեխան պետք է հանդարտված լինի եւ արդեն չպետք է ունենա անսովոր վարք՝ գերլարվածություն, ագրեսիա, արցունքներ...

Մանկական հոգեբաններն ու ակնաբույժները խորհուրդ են տալիս՝ մեկ-երկու տարեկան երեխան չպետք է հեռուստացույց դիտի 15 րոպեից ավելի, երեք տարեկանում՝ 40 րոպեից ոչ ավելի, վեց տարեկանում՝ մեկուկես ժամ:

Երեխային պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել, եթե ֆիլմի դիտումից հետո ողջ օրվա ընթացքում, անգամ հաջորդ օրը, ֆիլմի ազդեցության տակ է, ճնշված, դժվարությամբ է շփվում, չի ցանկանում բակ դուրս գալ կամ էլ չափից դուրս ակտիվ է, ագրեսիվ եւ չի ենթարկվում: Եթե երեխան չափից դուրս տպավորվող է եւ այն, ինչ տեսնում է՝ ընդունում է որպես իրականություն, ապա պետք է զրույցների միջոցով հանգստացնել նրան:

Նախ՝ պետք է նրա երեւակայությունը ուղղորդել դեպի դրական ընկալումները: Աշխատեք հարցերի միջոցով, օրինակ՝ ի՞նչ կախարդական միջոց կգտնես, որ փրկես հերոսին, հեքիաթի հերոսներից ո՞ւմ հետ կցանկանայիր հանդիպել, եթե փերի լինեիր, ի՞նչ լավ բան կանեիր: Երեխան ոչ միայն թող պատմի, թե ինչպես կվարվի, այլեւ ցույց տա՝ ինչպես կհաղթի չարին: Թող հարվածի ձեռքով, ոտքով, թռչկոտի, նստի, վեր կենա: Սա կօգնի լիցքաթափվել եւ փոքր-ինչ հանդարտվել: Նրան անպայման բացատրեք, որ ֆիլմում տեսածն ընդամենը հորինվածք է, խաղ է, որ որոշ մարդիկ այդ ամենը պատրաստել են խաղի համար, իրական կյանքում ամեն ինչ այնպես է, ինչպես եղել է մինչ ֆիլմի դիտումը:

Երեխայի հետ ուսումնասիրեք այն բոլոր անկյունները, որ նրան վախ են ներշնչում: Թվարկեք բոլոր առարկաները, որ տեսնում եք: Թող նրա հիշողության մեջ այդ ամենը տպավորվի, եւ նա հստակ իմանա՝ ինչ կա մահճակալի տակ, անկյունում, խորդանոցում...

Երեխայի ներաշխարհը պաշտպանելու համար հարկավոր է՝

- Եթե երեխան, այնուամենայնիվ, դիտել է դաժան կամ սարսափ-ֆիլմ, տեսարան, նրան բացատրեք եւ գնահատական տվեք, ինչպես պետք է վարվի կինոհերոսը իրավիճակից դուրս գալու համար:

- Բաժանումների եւ միայնության թեման քննարկեք երեխայի հետ եւ բացատրեք:

- Եթե երեխան երկար ժամանակ անհանգստանում է, նրան բացատրեք, որ իր հետ նման բան չի պատահի, քանի որ նրան շատ եք սիրում եւ չեք կարող առանց նրա ապրել...

Որոշ ծնողներ գտնում են, որ տանը հեռուստացույց չպետք է լինի: Դա ճիշտ չէ: Չնայած ամեն ոք ունի ընտրելու իրավունք:

Հեռուստացույցի բացակայության դեպքում երեխան իրեն հասակակիցների համեմատ ընկճված կզգա: Նրան չի կարելի զրկել հեռուստացույցից: Փոխարենը՝ պետք է ապահովել անվնաս դիտում:

Երեխային հեռուստացույցից երկար ժամանակով կտրելու համար հարկավոր է առօրյան այնպես կազմակերպել, որ ազատ ժամանակ քիչ ունենա: Շատ ավելի նախընտրելի է, որ երեխան բակում խաղա, վազվզի, քան հեռուստացույց դիտի: Նրա համար պետք է ստեղծել հետաքրքրությունների մի մեծ աշխարհ:

Հեռուստացույցը չպետք է երեխայից խլի քնելու ժամանակը: Նույնիսկ ամենահետաքրքիր հաղորդումը չպետք է փոխի երեխայի օրվա ռեժիմը: Նա պետք է գիտակցի, որ չի կարող համոզել մայրիկին եւ հայրիկին: Նույնիսկ որոշ մասնագետներ խորհուրդ են տալիս քնելուց առաջ հեռուստացույց չդիտել:

Երեխաները շատ են սիրում քնելուց առաջ զրուցել: Օգտվեք նրանց այդ «թուլությունից»:

Մանկական խաղահրապարակ

Շատ ծնողներ համոզված են, որ եթե մանկական խաղահրապարակները մանուկների համար են, ապա անվտանգ են: Սակայն պարզվում է՝ հիվանդանոցում հայտնված շատ փոքրիկներ հենց խաղահրապարակներից են տեղափոխվում, եւ ստացած վնասվածքները հիմնականում ընկնելու հետեւանք են:

Երեխային խաղահրապարակ տանելիս զգուշացեք.

- ստուգեք՝ չկա՞ն արդյոք սուր մասեր,
- թույլ մի տվեք շատ ուժեղ ճոճվեն,
- շարֆեր մի կապեք: Դրանք կարող են փաթաթվել պարանոցին,
- թույլ մի տվեք, որ երեխան սուր առարկաներով խաղա. կամ իրեն կվնասի, կամ կողքին խաղացող փոքրիկին,
- զրույցով մի տարվեք եւ երեխային անընդհատ ուշադրություն կենտրոնում պահեք:

Յուլիանա Պուչկա
Մանկական հոգեբան
Ըստ ռուսական մամուլի

Թմրալաբորատորիա՝ Մուսոլինիի դարաշրջանից

Իտալիայի հարկային ոստիկանության աշխատակիցները հայտնաբերեցին թմրաբույսի ցանքատարածք՝ լքված երկաթգծի թունելում: Մետրոշինարարները պլանտացիան կյանքի էին կոչել դեռեւս Մուսոլինիի ֆաշիստական դարաշրջանում:

Տորպիգնատարա շրջանի ստորգետնյա թմրալաբորատորիայից առգրավվեց 340 կգ մարիխուանա, որի շուկայական գինը մոտ 3 միլիոն եվրո է, գրում է The Guardian թերթը: Ստորգետնյա պլանտացիայում աճում էր կանեփի հազար թուփ: Բույսին անհրաժեշտ լույսն ապահովում էին հզոր հալոգենային լամպերը: Կային նաեւ մարիխուանայի չորացման եւ պատրաստի թմրամիջոցի վակուումային փաթեթավորման սարքավորումներ:

Հանցագործները լուծել էին նաեւ գաղտնի թմրալաբորատորիա մուտք գործելու հարցը. այնտեղ կարելի էր թափանցել մեն-միակ ճեղքով, որը փակված էր շինափլվածքով. իբր թունելը չի գործում: Իսկ պատի արտաքին, մեկուսի մասում սնկի պլանտացիա էր, ինչը թույլատրվում էր աճեցնել, գրում է Reuters-ը:

Երբ ոստիկանները մտան թունել, նրանց ոտքերի տակ սկսեցին խշխշալ ամենուրեք թափված պլաստիկ սկավառակները, ինչն ազդարարում էր հնարավոր վտանգը: Գետնի տակ մարիխուանայի այնպիսի հոտ էր կանգնած, որ ոստիկան-կինոլոգները հետախույզ-շներին հանեցին թարմ օդ, որպեսզի կենդանիների հոտառությունը չվնասվեր:

Թմրարտադրանքի կազմակերպման մակարդակը ենթադրում էր, որ Հռոմի թունելում ստեղծված պլանտացիան տնօրինում է մաֆիան: Ավելի ճիշտ՝ նեապոլիտանական մի խմբավորման ձեռքի գործն էր...

Տորպիգնատարայի թունելը կառուցվել է 1930-ական թվականներին, երբ Իտալիայում իշխում էր Բենիտո Մուսոլինին: 800-մետրանոց ժայռափոր անցուղում է գտնվում նաեւ Իտալիայի բանկի պահոցը:

Երկրորդ աշխարհամարտը խանգարեց հզոր երկաթգծի կառուցմանը, իսկ նոր դարաշրջանում լքված թունելը հրապուրեց թմրամաֆիային: Այդ բացառիկ վայրում ոստիկաններին հաջողվեց ձերբակալել թմրարտադրությամբ զբաղվող միայն մեկ մարդու՝ 57-ամյա հռոմեացու, որը սնկի պլանտացիայի տերն էր: Սնկարանի հետեւում թաքնված թմրալաբորատորիայում ոչ ոքի չգտան, թեպետ հայտնաբերված հետքերը վկայում էին վերջերս այնտեղ գտնված մարդկանց մասին. դիմակներ, ձեռնոցներ, հատուկ հագուստ եւ բույսերը մշակելու գործիքներ...

Օպերատիվ

Գիշերով եւ անվտանգ

Օրվա մութ ժամերին տեղի ունեցող ճանապարհատրանսպորտային պատահարների խնդիրը լուրջ հիմնահարց է: Չնայած գիշերը երթեւեկության հոսքն անհամեմատ նվազում է՝ մինչեւ 20%, սակայն հենց այդ ժամերին է արձանագրվում պատահարների մոտ 40%-ը. հատկապես վտանգավոր են մթնշաղն ու աղջամուղջը: Բացի այդ, օրվա մութ ժամերին է կատարվում ծանր հետեւանքներով պատահարների զգալի մասը. ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ոչ բավարար լուսավորվածության պայմաններում 30-40%-ով աճում է մահվան ելքով պատահարների հավանականությունը:

Գիշերային ժամերին խիստ կարեւորվում է ճանապարհների արհեստական լուսավորվածության հարցը, եւ պատահական չէ, որ բնակավայրերում գիշերն ավելի քիչ պատահար է արձանագրվում, քան միջքաղաքային ավտոմայրուղիներում:

Օրվա մութ ժամերին հատկապես վտանգավոր վիճակում են հետիոտներն ու հեծանվորդները:

Որքան էլ տարօրինակ թվա՝ գիշերային ժամերին առավել ռիսկային խմբում են փորձառու վարորդները. նրանց մասնակցությամբ պատահարների հավանականությունը 2,5 անգամ մեծ է, քան սկսնակներինը, ինչը պայմանավորված է վերջիններիս զգուշավորությամբ եւ սահմանվածից ցածր արագությամբ երթեւեկելու հանգամանքով:

Օրվա մութ ժամերին երթեւեկության անվտանգության աստիճանը բարձրացնելու համար էական նշանակություն ունեն մի քանի նախադրյալներ՝ ճանապարհային հանգույցներում, հետիոտնային անցումներում համապատասխան լուսավորվածության ապահովումը, երթեւեկության մասնակիցների հոգնածությունը, ալկոհոլ օգտագործելը, ճանապարհին կամ հարող տարածքներում գտնվող առարկաների տեսանելիությունը համապատասխան լուսանդրադարձնող տարբերանշաններով ապահովելը եւ այլն:

Բնական լույսի բացակայությունը, բնականաբար, էապես նվազեցնում է տեսադաշտը, սահմանափակում տեսողությունը: Այդ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է կիրառել մի քանի կանխարգելիչ միջոցներ՝ առավել կատարելագործել տրանսպորտային միջոցների լուսարձակները, հետիոտնային արահետները երթեւեկելի մասից առանձնացնել արգելապատնեշով, ճանապարհային նշանները եւ նշագծումներն առավել տեսանելի դարձնել, համապատասխան միջոցներով նվազեցնել երթեւեկության արագությունը, հանդիպակաց գոտիներն իրարից տարանջատել գազոնների կամ բետոնե պատնեշների միջոցով, առավել կոնֆլիկտային տարածքներում՝ խաչմերուկներում, հետիոտնային անցումներում, ապահովել լրացուցիչ լուսավորություն:

Միանշանակ է, որ ճանապարհների արհեստական լուսավորվածությունն առավելություն ունի բուն տրանսպորտային միջոցների լուսարձակների համեմատ: Ուսումնասիրությունները վկայում են, որ լուսավորված փողոցներում երթեւեկության անվտանգության աստիճանն առնվազն հինգ անգամ բարձր է:

Շատ երկրներում նույնիսկ ուշադրություն է դարձվում լուսավորվածության աստիճանին՝ լույսի հզորությանը, գույնին: Արեւմտյան որոշ երկրներում փողոցային լուսավորվածության կատարելագործման արդյունքում՝ հատկապես հետիոտնային անցումների լրացուցիչ լուսավորվածության դեպքում, նկատվել է օրվա այդ ժամերին արձանագրված պատահարների մինչեւ 30% եւ վրաերթերի 60% նվազում:

Երթեւեկության ինտենսիվությունը օրվա տարբեր ժամերի տարբեր է եւ, ինչպես նշեցինք, ճանապարհները հատկապես «թեթեւանում» են գիշերը: Այս առումով որոշ մասնագետներ ժամանակ առ ժամանակ առաջարկում են գիշերը անջատել լուսակիրները: Այս առաջարկը տարիներ առաջ փորձարկեցին Գերմանիայի բնակավայրերից մեկում, եւ երեք տարի տեւած փորձարկման արդյունքում պարզվեց, որ չկարգավորվող խաչմերուկներում գիշերային ժամերին վթարի ենթարկվելու հավանականությունը մեծանում է երեք անգամ:

Ներկայումս որոշ երկրներում ասֆալտին հատուկ նյութեր են ավելացվում, որոնք ճանապարհածածկը դարձնում են ավելի բաց երանգի, տեսանելի եւ «լուսավոր»:

Ա. Ա.

Դարի հիվանդությո՞ւն...

Ինքնասպանությունը տասնիններորդ հարյուրամյակի վերջին եւ քսաներորդի սկզբին համարվում էր «դարի հիվանդություն»: Այդ երեւույթը դիրքերը չի զիջել նաեւ 21-րդ դարում:

Թեմային անդրադառնալը կարեւորվում է նրանով, որ մարդկության զարգացման ներկա փուլում տեղի ունեցող քաղաքական, սոցիալական փոփոխությունները, ճգնաժամերն ազդում են մարդու հոգեկանի, ինքնագնահատման վրա, եւ նա հայտնվում է մի իրավիճակում, որտեղից այլ ելք չի տեսնում, քան ինքնասպանությունը:

Աշխարհում տարեկան մոտ 900 հազար մարդ կամավոր հրաժեշտ է տալիս կյանքին, այսինքն՝ ինքնասպանություն է կատարվում յուրաքանչյուր քառասուն վայրկյանը մեկ: Մի շարք վիճակագրական տվյալների համաձայն՝ ինքնասպանությունը համարվում է տասնհինգից քառասուն տարեկան մարդկանց մահվան հիմնական պատճառներից մեկը: Դայտնվելով անելանելի դրության մեջ՝ իրենց կարծիքով ընտրում են ամենահեշտը՝ կյանքի համար պայքարելու փոխարեն՝ մահը: Նույն վիճակագրությունը հաստատում է, որ ինքնասպանությունների թիվը, աճն ու նվազումը ոչ մի կապ չունեն երկրի սոցիալ-տնտեսական վիճակի հետ, թեպետ առաջին հայացքից կարող է այդպես թվալ: Ինքնասպանությունների ցուցանիշով առաջնային տեղեր են զբաղեցնում հենց զարգացած երկրները: Մեզանում տոկոսը բարձր չէ:

Իրավապահների համար առաջնային է ոչ միայն ինքնասպանության հանգամանքների բացահայտումը. կարեւորվում են նաեւ դրանց բացառումն ու կանխարգելումը: Շատ են դեպքերը, երբ ոստիկանների աչալուրջ եւ պրոֆեսիոնալ գործողությունների շնորհիվ կանխվել են ինքնասպանության դեպքեր, փրկվել կյանքեր:

Հուլիսի 9-ին ոստիկանության Մաշտոցի բաժնի ծառայողները մայրաքաղաքի Կիեւյան կամրջի մոտակայքում ծառայություն էին կատարում: Շուտով նրանց տեսադաշտում հայտնվեց մի երիտասարդ, ում տարօրինակ վարքը չվրիպեց ոստիկանների աչքից:

Ոստիկանների ձեռնարկած գործողությունների շնորհիվ երիտասարդը չհասցրեց կամրջից նետվել. նրան տեղափոխեցին ոստիկանության Մաշտոցի բաժին:

Կատարվածից ուշքի եկած եւ արդեն իսկ զղջացող երիտասարդը ոստիկանությունում կարողացավ հանգիստ խոսել:

Նրա մոտից հատնաբերված երկտողում ներկայացված էին այդ քայլին դիմելու պատճառներն ու հանգամանքները: Մեծ պարտքեր ուներ, չէր կարողանում վճարել ու որոշել էր այդ կերպ ազատվել...

Սխալ կլինի մտածել, թե ոստիկանների աչալրջության շնորհիվ հնարավոր է խուսափել ինքնասպանություններից: Պարզապես յուրաքանչյուրս, երբ գալիս է բեկումնային պահը, մեր մեջ, մեր հոգում պետք է արթնացնենք ինքնապահպանման բնազդը, որն ապրում է մինչեւ մեր վախճանը:

Հ. Պ.

Իրավաբանական խորհրդատվություն

Ի՞նչ է ամուսնության անվավերությունը

Ամուսնաընտանեկան օրենսդրությամբ սահմանված պայմանների խախտումով կնքված ամուսնությունը, ինչպես եւ այն ամուսնությունը, որը չնայած կնքվել է օրենքի պահանջների լրիվ պահպանմամբ, սակայն առանց ընտանիք կազմելու մտադրության (կեղծ ամուսնություն), կարող է ճանաչվել անվավեր:

Ամուսնությունն անվավեր է ճանաչվում դատական կարգով: Օրենքը դատարաններին իրավունք է տալիս ամուսնությունն անվավեր ճանաչել եւ ոչ թե պարտավորեցնում է օրենքով նախատեսված պայմանների խախտումով կնքված ամեն մի ամուսնություն անառարկելիորեն համարել անվավեր:

Դատարանն ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում պարտավոր է այդ վճռի քաղվածքն ուղարկել ամուսնության պետական գրանցման վայրի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին: Ամուսնությունն անվավեր է ճանաչվում դրա պետական գրանցման պահից:

Ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունեն՝

ա) անչափահաս ամուսինը, նրա ծնողները (օրինական ներկայացուցիչները), խնամակալության եւ հոգաբարձության մարմինը, եթե ամուսնությունը կնքվել է ամուսնական տարիքի չհասած անձի հետ: Անչափահաս ամուսնու տասնութ տարին լրանալուց հետո ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունի միայն այդ ամուսինը,

բ) ամուսինը, որի իրավունքները ամուսնության կնքմամբ խախտվել են, եթե ամուսնությունը կատարվել է ամուսիններից մեկի կամավոր համաձայնության բացակայության դեպքում՝ հարկադրանքի, խաբեության, մոլորության կամ ամուսնության պետական գրանցման պահին իր գործողությունները գիտակցելու եւ դրանք ղեկավարելու անհնարինության արդյունքով,

գ) ամուսինը, որը չի իմացել ամուսնության կնքմանն արգելք հանդիսացող հանգամանքների առկայության մասին, դատարանի կողմից անգործունակ ճանաչված ամուսնու խնամակալը, նախորդ չամուսնալուծված ամուսնության մեջ գտնվող ամուսինը, այլ անձինք, որոնց իրավունքները խախտվել են օրենքի պահանջների խախտումով կատարված ամուսնության կնքմամբ, ինչպես եւ խնամակալության եւ հոգաբարձության մարմինը,

դ) ամուսնության կեղծ լինելու մասին չիմացող ամուսինը:

Դատարանը կարող է ամուսնությունը վավերական ճանաչել, եթե ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին գործի քննության պահին վերացել են դրա կնքմանն արգելք հանդիսացող հանգամանքները:

Կնոջ հղիության կամ երեխա ծնվելու դեպքում, կամ եթե դա են պահանջում անչափահաս ամուսնու շահերը, ինչպես եւ ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին անչափահաս ամուսնու համաձայնության բացակայության դեպքում դատարանը կարող է մերժել ամուսնացող անձի հետ կնքված ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին հայցը:

Դատարանը չի կարող ամուսնությունը ճանաչել կեղծ, եթե նման ամուսնություն գրանցած անձինք մինչեւ դատարանի կողմից գործի քննությունը, փաստորեն, ընտանիք են կազմել:

Ամուսնության դադարումից հետո ամուսնությունը չի կարող անվավեր ճանաչվել, բացառությամբ ամուսինների միջեւ օրենքով արգելված ազգակցական կապի առկայության կամ ամուսնության պետական գրանցման պահին ամուսիններից մեկի կողմից այլ չլուծված ամուսնության մեջ գտնվելու դեպքերի:

Ամուսնությունն անվավեր ճանաչած անձանց կնքած ամուսնական պայմանագիրը, որպես կանոն, ճանաչվում է անվավեր:

Ամուսնությունն անվավեր ճանաչելը չի ազդում այդպիսի ամուսնությունից ծնված կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու պահից հետո՝ երեք հարյուր օրվա ընթացքում, ծնված երեխաների իրավունքների վրա:

Բարեխիղճ ամուսինն իրավունք ունի պահանջելու հատուցել իրեն պատճառված գույքային վնասը՝ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ամուսնությունն անվավեր ճանաչելու դեպքում բարեխիղճ ամուսինն իրավունք ունի պահպանելու ամուսնության պետական գրանցման ժամանակ ընտրված ազգանունը:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Վտանգավոր իրավիճակներ ճանապարհներին

Ճանապարհատրանսպորտային իրավիճակների վտանգներն օբյեկտիվորեն գնահատելու ունակություններ վարորդը ձեռք է բերում ժամանակի ընթացքում, համապատասխան փորձառությունից հետո: Վարել սովորելը դեռ չի նշանակում տիրապետել մեքենան ճշգրիտ կառավարելուն: Երբեմն վարորդները չտիրապետելով իրավիճակային «գրագիտությանը», վտանգի մեջ հայտնվելով՝ ընկնում են, այսպես ասած, իրավիճակային թակարդը:

Ճանապարհային որոշակի իրավիճակներ կան, որոնք առավել հաճախ են հանդիպում եւ համեմատաբար վտանգավոր են: Երթեւեկությունն անվտանգ դարձնելու համար վարորդին անհրաժեշտ է արագ եւ ճիշտ գնահատել վտանգավոր իրավիճակը եւ, որ պակաս կարեւոր չէ՝ կանխատեսել դրանց հնարավոր զարգացումն ու երթեւեկության մյուս մասնակիցների գործողությունները, կարճ ժամանակահատվածում ընտրել ամենաարդյունավետ մարտավարությունը:

Փորձենք ներկայացնել նեղ ճանապարհային պայմաններում հասարակական տրանսպորտի կանգառների հատվածներում հնարավոր մի քանի իրավիճակներ եւ դրանց հակազդելու արդյունավետ միջոցներ:

Երթեւեկում եք երկգոտի երկկողմանի ճանապարհով, առջեւում՝ ճանապարհի աջ եզրին, հասարակական տրանսպորտի կանգառ է, որտեղ հենց նոր ավտոբուս է կայանել: Նման իրավիճակում դեպքերը կարող են այսպիսի զարգացում ունենալ. նախ՝ ավտոբուսից իջած ուղեւորները կարող են ճանապարհը հատել ավտոբուսի առջեւից: Ընդ որում, կարող եք մարդկանց նկատել բավական ուշ, երբ ձեր մեքենայի եւ ճանապարհը հատողների միջեւ տարածությունը ավելի քիչ լինի, քան արգելակման ուղին: Բացի այդ, ավտոբուսի վարորդը կարող է ուշադրությունը կենտրոնացնելով ուղեւորների վրա, չնկատել ավտոբուսը շրջանցող ձեր մեքենան եւ կտրուկ

ձախ ընդունելով՝ ստեղծել վթարային իրավիճակ: Նման իրավիճակներում՝ հասարակական տրանսպորտի կանգառների մոտ, վարորդները պետք է առավել ուշադիր եւ զգոն լինեն, հնարավորինս երթեւեկեն ճանապարհի ձախ հատվածում, որպեսզի նկատելի լինեն դիմացը կանգառ կատարած տրանսպորտային միջոցի վարորդին: Բայց, միեւնույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ ձախ կողմում գտնվող հետիոտնը կարող է հանկարծակի հատել փողոցն ու հայտնվել մեքենայի առջեւում: Ճանապարհի այս հատվածներում այնպիսի արագություն է պետք ընտրել, որը հնարավորություն կտա իրավիճակի անսպասելի փոփոխության դեպքում անվտանգ արգելակել: Դիշեք, որ կանգառների հատվածներում ճանապարհը կարող է սայթաքուն լինել:

Եթե նկատում եք, որ հասարակական տրանսպորտը միացրել է ձախ թարթիչն ու փորձում է երթեւեկելի գոտի դուրս գալ, ապա զիջեք ճանապարհը, քանի որ դա ոչ թե քաղաքավարական ժեստ է, այլ՝ երթեւեկության կանոնների պահանջ:

Դիմա պատկերացրեք նույն իրավիճակը, սակայն տարբերությամբ, որ գտնվում եք հանդիպակաց երթեւեկելի գոտում: Նման իրավիճակում անհրաժեշտ է հաշվի առնել, որ ճանապարհի նեղ լինելու պատճառով ավտոբուսի հետնամասից կարող է մեքենա հայտնվել:

Մեկ այլ վտանգավոր իրավիճակ. առջեւից ընթացող մեքենան փորձում է շրջանցել կանգառ կատարած ավտոբուսը, հատելով երթեւեկության հանդիպակաց գոտին, եւ դուք փորձում եք հետեւել նրան: Այս իրավիճակը կարող է հետեւյալ զարգացումն ունենալ. ավտոբուսը, ինչպես նշեցինք, սահմանափակում է տեսադաշտը, եւ հնարավոր է, որ ավտոբուսի առջեւում մեքենա լինի, որի վարորդն, ասենք, կփորձի շրջադարձ կատարել, եւ եթե ձեր մեքենան այդ պահին հայտնվի երթեւեկության հանդիպակաց գոտում, ապա մեծ է բախման հավանականությունը: Մյուս վտանգը ավտոբուսից իջած հետիոտներն են, որոնք կարող են ճանապարհին հայտնվել ամեն պահի:

Հասարակական տրանսպորտի կանգառները միշտ էլ դիտվում են որպես ռիսկային տարածքներ, անկախ նրանից՝ կանգառը ճանապարհի որ հատվածում է:

Եթե ճանապարհի տվյալ հատվածում կանգառը գտնվում է հանդիպակաց գոտում, ապա հնարավոր է, որ ավտոբուսի ժամանելուն պես հետիոտները շտապեն հատել փողոցը: Անձրեւի ժամանակ ավտոբուսի սպասող ուղեւորները կարող են թաքնված լինել անգամ ճանապարհի մյուս հատվածում:

Ա. Ա.

Հայտնաբերվել են հետախուզվողներ

Ոստիկանության Դավիթաշենի բաժանմունքի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ նոյեմբերի 11-ին Երեւանի Ծերենցի փողոցից ոստիկանության Մաշտոցի բաժին բերման է ենթարկվել 22-ամյա Մովսես Ա.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի (Խարդախությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Մարաշի բաժանմունքի քրեական հետախույզների եւ ՊՊԳՎ Կենտրոնական պահպանության բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ նոյեմբերի 11-ին Թբիլիսի-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո «Զվարթնոց» օդանավակայանի ժամանման սրահից ոստիկանության Մարաշի բաժանմունք է ներկայացել 47-ամյա Տիգրան Ե.-ն, որը ոստիկանության Մաշտոցի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի (Հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելուն հանցակցելը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ միջոցառումների եւ անցկացրած բացատրական աշխատանքների շնորհիվ նոյեմբերի 11-ին ոստիկանության Կենտրոնական բաժին է ներկայացել 31-ամյա Արմեն Հ.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի (Խարդախությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Աշտարակի բաժնի ծառայողները, Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանային բաժնի ծառայողների հետ համատեղ, նոյեմբերի 11-ին ԱՀ Շահումյանի շրջանի Չարեքտար գյուղից բերման են ենթարկել 24-ամյա Հարություն Վ.-ին, որը 2018 թ. հոկտեմբերից ոստիկանության Աշտարակի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 140-րդ (Սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը), 182-րդ (Շորթումը) եւ 118-րդ (Ծեծը) հոդվածների մեղադրանքներով:

◆

Նոյեմբերի 9-ին ոստիկանության Արտաշատի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ բացատրական աշխատանքների շնորհիվ ոստիկանության Արտաշատի բաժին է ներկայացել 58-ամյա Վրեժ Ս.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի (Խուլիգանությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Մեծամորի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ նոյեմբերի 9-ին Մոսկվա-Երեւան չվերթի ժամանումից հետո «Զվարթնոց» օդանավակայանի ժամանման սրահից բերման է ենթարկվել 52-ամյա Շիրինշա Խ.-ն, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի (Գողությունը) մեղադրանքով:

◆

Նոյեմբերի 8-ին ոստիկանության Ախուրյանի բաժնի քրեական հետախույզները, օպերատիվ տվյալներն իրացնելով, Շիրակի մարզի Հայկավան գյուղում հայտնաբերել եւ բերման են ենթարկել նույն գյուղի 41-ամյա մի բնակչի, որը 2016 թ. հունվարից ՌԴ Վոլգոգրադի մարզի իրավապահների կողմից հետախուզվում էր կողոպուտի մեղադրանքով:

Խուզարկությամբ հայտնաբերվեցին թմրանյութեր

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները, ստացված օպերատիվ տվյալները ոստիկանության Շենգավիթի բաժնի գործընկերների հետ իրացնելով, Երեւանի Արարատյան փողոցում հայտնաբերեցին ու կասկածանքով բերման ենթարկեցին 31 ու 45 տարեկան երկու տղամարդու: Ավագի անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց 8 հատ հոգեներգործուն դեղահաբ: Հարուցված քրեական գործի շրջանակներում, դատարանի որոշմամբ, ոստիկանները խուզարկեցին 31-ամյա տղամարդու բնակարանը եւ հայտնաբերեցին մարիխուանայի նմանվող զանգվածներ ու հոգեմետ դեղահաբեր: Նա ձերբակալվել է, իսկ 45-ամյա տղամարդը ստորագրությամբ բաց է թողնվել: Նշանակվել են փորձաքննություններ: Օպերատիվ-քննչական միջոցառումները շարունակվում են:

Ոստիկանության Ստեփանավանի բաժնի քրեական հետախույզները, իրացնելով օպերատիվ տվյալները, ապօրինի թմրաշրջանառության դեպք են բացահայտել: Նրանք Ցաղդան գյուղի Կենտրոնական փողոցում հայտնաբերել ու ոստիկանության Ստեփանավանի բաժին բերման են ենթարկել Լոռու մարզում ապրող մի քանի երիտասարդի: Նրանցից մեկի խուզարկությամբ հայտնաբերվել է մարիխուանա:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում Ստեփանավանի ոստիկանները փաստական տվյալներ ձեռք բերեցին, որ երիտասարդին թմրամիջոցը իրացրել էր Ցաղդան գյուղում ապրող 48-ամյա մի տղամարդ: Նա եւս հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց:

Երկու դեպքով էլ հարուցվել է քրեական գործ:

Կատարվում է նախաքննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Դանակահարողը կին էր

Նոյեմբերի լույս 7-ի գիշերը հիվանդանոցից ոստիկանության Արարատի բաժին հաղորդում ստացվեց, որ կրծքավանդակի կտրած-ծակած վնասվածքով հիվանդանոց է տեղափոխվել Արմավիրի մարզի բնակիչ, 43-ամյա մի տղամարդ:

Ոստիկանության Արարատի բաժնի Արարատի բաժանմունքի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումներով փաստական տվյալներ ձեռք բերվեցին, որ տղամարդը վնասվածքը ստացել է Արարատ քաղաքում՝ մտերմուհու դանակահարելու հետեւանքով: 51-ամյա կինը հրավիրվեց ոստիկանություն ու խոստովանեց կատարածը:

Հանցագործության գործիք խոհանոցային դանակը հայտնաբերվել եւ առգրավվել է:

Դեպքի հանգամանքները քննությամբ պարզվում են:

Գրպանահատը բերման ենթարկվեց

Նոյեմբերի 7-ին ոստիկանության Մալաթիայի բաժնում ահազանգ ստացվեց, որ երթուղային ավտոբուսում գողացել են մի աղջկա դրամապանակը, որի մեջ եղել էին փող ու զեղչի քարտեր:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի գրպանահատության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողները Մալաթիայի գործընկերների հետ ձեռնարկած միջոցառումներով պարզեցին, որ գրպանահատությունը կատարել է մայրաքաղաքի բնակիչ, 31-ամյա մի տղամարդ: Նա հենց դեպքի օրը հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց Մալաթիայի բաժին, որտեղ էլ տվեց խոստովանական բացատրություն:

Նախապատրաստվում են նյութեր:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

ԼՂՀ
Գետ, Կրասնոյարսկի երկրամաս
Անգլիացի գրող
Լապտեւների ... / Եզ
Լեմ, վեպ
Չինվ. կոչում / Աչք
... այգի
Քիմ. տարր / Հռոմեացու հագուստ
Ամերիկյան ցուլ
Ազգություն, Ասիա
Գավառ, Մեծ Հայք / ... Թեիլերյան
... Ահեղ / Խորհրդ. քանդակագործ
Կարծր բնափայտով ծառ
Լի ... / Բանիոնիս / Քաջ ...
Ռուսական նվագարան
Կտորի շերտ
Թուքանհամոն
Որոգայթ / Բոլերո
«...ը», Թումանյանի պատմվածք
Միրգ / Նոտագր. նշան
... Աղայան
Գիտութ. ներկայացուցիչ
... Զարոբյան
Արեւադարձ. բույս / Հայնրիխ ...
... - Բարբաս
Էնրիկո ... / Խոսքի մաս / Մալուխ
Նուրբ, քնքուշ
Ճիրան / Թերակղզի, ՌԴ
Լեոնիդ ... / Գետ, Ռուսաստան
Անտառների աստված
«... հոգսերի ծմեռը»
Ռուբլի / «... եղբայրներ»
Ռուս կինոդերասան
Ֆրանս. նկարիչ
Օրար / Եռանդ, զորություն
Հոգեւոր ուսումն. հաստատութ.
Քվանտ. գեներատոր / Գումարտակ, վաշտ
Ավտոմեք. տեսակ / Մոսկ. ֆուտ. ակումբ
Մարզչի աշակերտ / Քար
Քամի / Մայրենի, օտար ...
Ասպետական սիրո երգիչ
Վարած հող / Ատրճանակ
Ժ. Բեկո, երգ
Ջրային տարածք / Թուքակ
Մարիա ... / Տնային գործածութ. իր
... Դուման / Միջատ
Խարտյաշ
Տիգրան ... / Ռուս լեզվաբան
Գութանի մաս / Պարքայլ
Պոլ ...
... արվեստ
Իտալ. դերասանուհի
Բրազիլ. նահանգ
Փափուկ մետաղ
... - Պասոս
Տունդրայի բույս
Թռչուն / Ենիսեյի վտակ
Այծ
Թենիսիստ, ԱՄՆ
Դոլարի նախնին
«Վիլհելմ Տել», օպերա
Հայ գուսան / ... Մերանգուլյան
Շինության մաս / Ծոմ
... Քրոու
Չինաստան
Աղի լիճծով
Նոր տարվա առաջին օրը
Քամյու, վիպակ
Համատեղություն
Իլյա ...
Մածնաջուր
Արեւել. տիրակալի տիտղոս
Հարս

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Սպդագուշակ

Խոյ - Վճռական եք տրամադրված. սիրով ընդունում եք մարտահրավերները:

Ցուլ - Կարող է հատկապես դժվար լինել նրանց համար, ովքեր սովոր են աշխատել դաշնակիցների հետ:

Երկվորյակ - Փորձեք վերահսկել ձեր հուզական վիճակը, այլապես կարող եք հրաժարվել սեփական նպատակներից:

Խեցգետին - Անհրաժեշտ կլինի այն, ինչ սովորել եք նախկինում, իսկ ահա ուրիշի խորհուրդները անօգուտ կլինեն:

Առյուծ - Կհաղթահարեք այն գործերը որոնք նոր ուղիներ եւ մեթոդներ են պահանջում: Հաճելի անակնկալներ եւ լավ նորություններ կունենաք:

Կույս - Ոչինչ մի խոստացեք, եթե թեկուզ մի փոքր կասկած ունեք, որ չի հաջողվի կատարել խոստացածը:

Կշեռք - Օգտակար տեղեկություններ կստանաք, որոնց շնորհիվ ձեր առջեւ շուտով նոր դռներ կբացվեն:

Կարիճ - Շաբաթը նպաստավոր է: Կարելի է հաջողության հասնել, որովհետեւ լարված պահերին ձեզ չեք կորցնում:

Աղեղնավոր - Շաբաթվա սկիզբը հաճելի կլինի, բայց սխալ կլինի մտածել, որ դա երկար կշարունակվի:

Այծեղջյուր - Օգտակար կլինեն այն գիտելիքները, որոնք ստացել եք նախկինում: Կգտնեք հուսալի դաշնակիցներ:

Ջրհոս - Հարաբերականորեն հանգիստ եւ արդյունավետ շաբաթ է: Մտածեք քայլ անելուց առաջ:

Ձուկ - Եթե ակտիվ լինեք, կարող եք հաջողության հասնել կարիերայում: Կարեւոր է չգերագնահատել սեփական ուժերը:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.d2-c3 b4:d2 2.c1:g5x

Խնդիր N2 1.f2-g3 h2:f4 2.g5:e7 f8:d6 3.h6:a7x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 14.11.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: